Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1955—1956 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 30 տարեկան ամուրի այն անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և մաթեմատիկայից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված թեմական խորհրդի կամ եկեղեցական վարչության հոգևոր պետի կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Մենդյան վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար:

Հայաստանի և միութենական երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն ոչ ուշ քան սույն թվի օգոստոսի 15-ը, իսկ արտասահմանյան երկրների թեկնածուները՝ ոչ ուշ քան հոկտեմբերի 1-ը:

Դիմումները պիտի տրվեն անձամբ կամ փոստով հետևյալ հասցեով՝

Հայկական ՍՍՌ, Էջմիածին, Հոգևոր Ճեմարանի Վերատեսչություն:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ